հանգամանքները հիմնավորող որևէ ապացույց:

Վերոգրյալի հաշվառմամբ դատարանը գտնում է, որ բացակայում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Մկրտչյանի կողմից 25.07.2025 թվականին կայացված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումն (որոշումն) անվավեր ճանաչելու՝ հայցվորի կողմից մատնանշված հիմքերը, որպիսի պայմաններում դատարանը հանգում է ամփոփիչ եզրահանգման առ այն, որ հայցն անհիմն է և ենթակա մերժման:

Ինչ վերաբերում է կիրառված հայցի ապահովման միջոցին, ապա նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման դատարանը գտնում է, որ վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից պետք է վերացնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 02.09.2025 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը:

4. Դատական ծախսեր.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման՝ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հատուցման հարցը պետք է համարել լուծված:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 362-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. ԱՁ Տարոն Դավիթի Մաթևոսյանի հայցն ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկի՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումն (որոշումն) անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:
2. Վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից վերացնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 02.09.2025 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը:
3. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:
4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE0B-2092-4D34-BBF7 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը: